ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2025 թվականի N 919-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 2024 թվականի սեպտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Մշակույթ և երիտասարդության պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով համակարգչում զետեղված թեկնածուների պատահական ընտրության մասին թիվ 1 արձանագրությունը՝ ***Որոշում եմ.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Մշակույթ և երիտասարդության պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի նոյեմբերի 27-ին թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2.Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Մշակույթ և երիտասարդության պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներին համաձայն:
3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 26
գ. Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի
ղեկավարի 2026 թվականի նոյեմբերի 26-ի
թիվ 919-Ա որոշման

ԿԱԶՄ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Արթուր Աշոտի Այվազյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Արմեն Թովմասի Ավչյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Անյուտա Բագրատի Սաֆարյան - ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Էմմա Պապոյի Թորոսյան – Փարաքար համայնքի ավագանի

Նաիրա Ռուդոլֆի Սվարյան - Արմավիրի մարզ Փարաքար համայնք Մուսալեռ բնակավայր <<Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն